

Արձանագրություն թիվ 03

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի
գ. Եղեգնուտ կայացած՝ 21.01.2012թ. ժամը 14⁰⁰ – ին:

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 65 անդամներ:
Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանը,
ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի 2012թ. տարեկան հաշվետվությունը
կատարած աշխատանքների մասին:
Զեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Զեկուցողը մանրամասը ներկայացրեց տարեկան կատարած իր աշխատանքների
մասին, մասնավորապես նշելով համայնքի 2012թ. համայնքային բյուջեի տարեկան
արդյունքները, ինչպես մուտքային, այնպես էլ ծախսային մասով:

Այսպես՝ 01.01.2012թ. – 31.12.2012թ. ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե
մուտքագրվել է 32324.5 հազ. դրամ, որը կազմում է 103.8%, իսկ ծախսային մասը
կազմում է 31940.6 դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 88.9 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան փաստացի կատ. % հազ. դրամ
1. հողի հարկ	4920.2 հազ. դրամ 97.2%
2. գույքահարկ իրավաբանական անձանցից	344.3 հազ. դրամ 57.4%
3. գույքահարկ ֆիզիկական անձանցից	1548.5 հազ. դրամ 220.2%
4. հողի վարձավճար	2098.1 հազ. դրամ 184.5%
5. այլ ոչ հարկային եկամուտներ	532.2 հազ. դրամ 100.0%
6. պետական բյուջեից ստացվել է դոտացիա	22053.3 հազ. դրամ 100 %
7. տեղական տուրքեր	5.9 հազ. դրամ 8.6%
8. այլ ֆոնդային մուտքեր	822.0 հազ. դրամ 100 %
Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է 103.8% :	

Վճարվել է.

1. աշխատավարձ	11032.9 հազ. դրամ
2. պարտադիր սոցիալական վճար	1968.4 հազ. դրամ
3. գրասենյակային և գրենական ապրանքներ	480.0 հազ. դրամ
4. օգն. սոց. անապ. ընտանիքներին	1725.0 հազ. դրամ
5. էլեկտրական էներգիաի վճարը	1976.8 հազ. դրամ
6. միջոցառման կազմակերպում	700.0 հազ. դրամ
7. տեղեկատվական ծառայություն	219.5 հազ. դրամ
8. տրանսպորտային նյութեր	1500.0 հազ. դրամ
9. համակարգչային սպասարկում մասնագ. ծառ.	175.0 հազ. դրամ
10. տրանսպ. միջ. ձեռք բերում	3300.0 հազ. դրամ
11. վարչական սարքավորումներ	641.0 հազ. դրամ
12. կապի ծառայություններ	121.0 հազ. դրամ
13. խ/մ ջրի պոմպի վերանորոգում	1100.1 հազ. դրամ
14. մանկապարտեզի շենքի վերանորոգում	7000.0 հազ. դրամ

Իր հարկային պարտավորությունները չի կատարում «Բետարդժին» ՍՊԸ – ի, ապառքը դատարանի որոշմամբ կասեցվել է կազմակերպության լուծարման պատճառով:

Նշվեց նաև, որ համայնքում առկա են հետևյալ խնդիրները՝

1. մանկապարտեզի նոր գույքի ձեռքբերում,
2. համայնքի փողոցների լուսավորության անցկացում
3. ոռոգման ջրի հիմնախնդիրների լուծում

Արտահատվեցին – Վ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
Է. Աբրահամյանը / ավագանի/, Վ. Մարգարյանը / ավագանի /,
Ե. Կարապետյանը / սեփականատեր /, Լ. Գևորգյանը / սեփականատեր/:

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համայնքի ղեկավարի 2012թ. տարեկան կատարած աշխատանքները գնահատել բավարար:
2. Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և գլխ. մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝
 - ա) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ եռամսյակների 100% - ով:
 - բ) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի, վարձավճարների և գույքահարկի մասով ապահովել 100% - ով,
 - գ) բյուջեի կատարողականը հասցնել մինչև 100% և կատարել քառամյա զարգացման ծրագրերի պահանջները:



[Handwritten signature]
[Handwritten signature]

Ռ. Մարգարյան

Ս. Ալեքսանյան